ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթներ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի մարզային ենթակայության՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Նորատուսի ԲԱ>>, <<Գանձակի ԱԱՊԿ>>, <<Լճափի ԱԱՊԿ>>, <<Վերին Գետաշենի ԲԱ>>, <<Վարդենիկի ԱԿ>>, <<Վաղաշենի ԱԱՊԿ>>, , <<Լճաշենի ԲԱ>>, <<Ծովագյուղի ԲԱ>>, <<Ծակքարի ԱԱՊԿ>>, պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

1.Բարձրագույն բժշկական կրթություն,

2. առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա ստաժ:

3.Իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/

4.Կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն,

5.Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ներառյալ՝

ա/ ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման,

բ/ անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման,

գ/ աշխատանքների բաշխման,

դ/ կարգապահական պատասխանատվության,

ե/ խրախուսանքի միջոցների կիրառման.

6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

7.Ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝գույքի, ներառյալ ֆինանսական միջոցների տնօրինման, և գործարքներ կնքելու կարողություններ:

8.Առողջապահական ծառայությունների, պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում:

9. չի լրացել հավակնորդի 65 տարին

10. Մրցույթները կանցկացվեն՝

1. <<Նորատուսի ԲԱ>> ՊՈԱԿ - 2019թ. ապրիլի 23-ին, ժամը՝ 10^{30}-ին
2. <<Գանձակի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. ապրիլի 23-ին, ժամը՝ 14^{30}-ին
3. <<Լճափի ԱԱՊԿ>>ՊՈԱԿ - 2019թ. ապրի 26-ին, ժամը՝ 10^{30}-ին
4. <<Վերին Գետաշենի ԲԱ>> ՊՈԱԿ - 2019թ. ապրիլի 26-ին, ժամը՝ 14^{30}-ին
5. <<Վարդենիկի ԱԿ>> ՊՈԱԿ - 2019թ. ապրիլի 30-ին, ժամը՝ 10^{30}-ին
6. <<Վաղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. ապրիլի 30-ին, ժամը՝ 14^{30}-ին
7. <<Լճաշենի ԲԱ>> ՊՈԱԿ - 2019թ. մայիսի 3-ին, ժամը՝ 10^{30}-ին
8. <<Ծովագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ - 2019թ մայիսի 3-ին, ժամը՝ 14^{30}-ին
9. <<Ծակքարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ - 2019թ. մայիսի 7-ին, ժամը՝ 10^{30}-ին

10. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացնում՝

1/ դիմում.

2/ մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3/ քաղվածք՝ աշխատանքային գրքույկից.

4/ ինքնակենսագրություն.

5/ անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6/ քաղաքացու ցանկությամբ՝ հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

7/ բնութագիր՝ վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

8/ կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/, որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

11. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9^{00}-15^{00}, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Դիմումների ընդունման ժամկետն է 2019 թվականի փետրվարի 20-ից մինչև 2019 թվականի մարտի 20-ը:

Մրցույթները կկայանան ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ.՝ 060650626:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ